DOI:10.46991/FLSP.2026.26.008
Մարգարիտ Ապրեսյան*
Երևանի պետական համալսարան
Մարիամ Կարապետյան†
Երևանի պետական համալսարան

«ԱՆԳԼԵՐԵՆԸ ՊԵՏԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (ՀԻՄՆՎԱԾ ESP ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ)

ABSTRACT

DESIGNING AN "ENGLISH FOR CIVIL WORKERS" CURRICULUM BASED ON ESP APPROACH

In the context of contemporary globalization and international cooperation, overcoming language barriers and improving the quality of official communication among public servants has become crucial. This article focuses on the design, necessity, urgency, and presentation of an English for Specific Purposes (ESP) curriculum tailored for civil workers. The study also analyzes the current challenges in modernizing the conceptual frameworks of foreign language teaching within the Republic of Armenia. The proposed curriculum is structured on a modular basis, encompassing key areas such as public administration, official correspondence, public speaking skills, international cooperation and diplomacy.

*e-mail: margaret.apresyan@ysu.am
†e-mail: mariam.karapetyan@ysu.am

Received: 09/06/2026
Revised: 19/06/2026
Accepted: 30/06/2026

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License.
© The Author(s) 2026

Key words. Curriculum, public administration, official correspondence, public speaking skills, international cooperation, diplomacy.

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի համաշխարհայնացման և միջազգային համագործակցության համատեքստում էականորեն կարևորվում է հանրային ծառայողների լեզվական պատնեշի հաղթահարումն ու պաշտոնական հաղորդակցության որակի բարձրացումը: Սույն հոդվածը նվիրված է պետական ծառայողների ուսուցման ծրագրի նախագծմանը (հիմնված ESP (անգլերենը հատուկ նպատակների համար) մեթոդաբանության վրա), նրա անհրաժեշտությանը, հրատապությանը և ներկայացմանը: Անդրադառնալով ՀՀ-ում գործող օտար լեզուների դասավանդման հայեցակարգային հիմունքների արդիականացման խնդիրների անհրաժեշտությանը՝ սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել դասավանդման ժամանակակից ծրագիր, որը կառուցված է մոդուլային սկզբունքով: Այն ներառում է պետական կառավարման, պաշտոնական գրագրության, հանրային խոսքի զարգացման, միջազգային համագործակցության, դիվանագիտության ոլորտները:

Բանալի բառեր՝ Անգլերենը հատուկ նպատակների համար, պաշտոնական գրագրություն, հանրային խոսքի զարգացում, միջազգային համագործակցություն, դիվանագիտության ոլորտներ:

РЕЗЮМЕ

О СОСТАВЛЕНИИ ПРОГРАММЫ «АНГЛИЙСКИЙ ЯЗЫК ДЛЯ ГОССЛУЖАЩИХ», ОСНОВАННОЙ НА МЕТОДОЛОГИИ ESP

В условиях современной глобализации и международного сотрудничества преодоление языковых барьеров и повышение качества официальной коммуникации среди государственных служащих приобрели первостепенное значение. В данной статье рассматриваются вопросы разработки, необходимости, актуальности и представления учебной программы по английскому языку для специальных целей (ESP), адаптированной для государственных служащих. Исследование также анализирует текущие проблемы модернизации концептуальных основ преподавания иностранных языков в Республике Армения. Предложенная учебная программа

построена на модульной основе и охватывает такие ключевые области, как государственное управление, официальная переписка, навыки публичных выступлений, международное сотрудничество и дипломатия.

Ключевые слова. Английский язык для специальных целей, государственное управление, официальная переписка, навыки публичных выступлений, международное сотрудничество, дипломатия.

Երրորդ հազարամյակը մարդկությանն ուղղված նոր խնդիրներ է առաջադրում, և երկրներն ու ժողովուրդները պարտավորված են դրանց լուծմանը՝ նորովի հայացք գցելով ցարդ եղած իրողություններին, միջմարդկային, միջպետական, ազգամիջյան և միջազգային հարաբերություններին: Նոր դարաշրջանում երկրների ու ժողովուրդների փոխհանդուր-ժողականության և ներդաշնակ համակեցության մթնոլորտ ապահովելու համար անուրանալի է լեզուների իմացության կարևորությունը: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Եվրախորհրդի միջազգային պարտավորությունները ստանձնած երկիր, գործուն կերպով զարգացնում է իր միջազգային հարաբերությունները՝ առավել հրատապ դարձնելով լեզվակրթության քաղաքականության արդիականա-

ցումը, որին իրապես պետք է ուղղված լինի համաշխարհային, նախ և առաջ համաեվրոպական կրթական տարածքի միասնացումը՝ հաշվի առնելով կրթության, մշակույթի առանձնահատկությունները և ավանդույթները: Լեզուների իմացության պետական կարևորության գիտակցմամբ է, որ ՀՀ Կառավարության ռազմավարական ծրագրերի առաջնահերթությունների շարքում հատուկ տեղ է հատկացված հանրապետության տարածքում դրանց իմացության ապահովման խնդրին: Այս խնդրի տևական ու շարունակական լուծմանն է նպատակաուղղված լինելու պետական ծառայողների համար անգլերենի (ESP) դասավանդումը և միջազգային թեստավորումը, որի գլխավոր նպատակն է հայկական իրականության մեջ ընդհանուր կրթության՝ XXI դարի ոգուն համընթաց քայլի հաստատումը՝ աշխարհի տարբեր ազգերի ու ժողովուրդների փոխճանաչողության, գործակցության, միջմշակութային ու քաղաքական շփումների հեռանկարով:

21-րդ դարը, ինչպես նշվեց, նոր մարտահրավերներ է նետել ազգերին ու պետություններին, որոնց մեջ մեծ

կարևորություն է տրվում օտար լեզուների պատնեշի հաղթահարմանը: Նոր ժամանակների պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է օտար լեզուների դասավանդման նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխություն, որը ենթադրել է տալիս անցյալի կարծրատիպերի վերացումը: Ահա վերոհիշյալ թերությունները շտկելու, ինչպես նաև կրթական ընդհանուր գործընթացը բարելավելու համար հարկ է վերանայել ՀՀ-ում գործող օտար լեզուների դասավանդման հայեցակարգային հիմունքները և պետական չափորոշիչները՝ հընթացս զինելով մասնագետներին գիտական ու մեթոդական նորարարական հմտություններով: Վերապատրաստումը ենթադրում է նաև տևական և չընդհատվող ինքնակատարելագործում, դասավանդման մեթոդների միապաղաղության հաղթահարում, նոր մեթոդների համալրում: Այս ամենն էլ հուշել է տալիս միջմշակութային նորորակ հաղորդակցության պայմաններում նոր ժամանակների առարկայական բովանդակավորմանն ու մեթոդաբանությանը հարիր

ծրագրերի ու դասագրքերի նորովի ստեղծման անհրաժեշտություն։ Ի վերջո, օտար լեզուներով նախատեսված իրազեկային պաշարը նոր մոտեցումներով հասցեատիրոջը՝ աշակերտին, ուսանողին և առհասարակ օտար լեզու սովորել ցանկացողին լիածավալ և լիարժեքանշանակ մատուցելու լուրջ խնդիր ունենք և պարտավոր ենք լուծել այդ խնդիրը։

Այսպիսով՝ Եվրոպայում և ամբողջ աշխարհում մարդկանց արդյունավետ հաղորդակցությանը (քաղաքականության, գիտության/տեխնիկայի, տնտեսության և գործարարության բնագավառներում), ինչպես նաև մարդկանց ազատ տեղաշարժմանը նպաստելու համար հարկավոր է կրթել բազմալեզու անհատի՝ լեզուների բարձրակարգ իմացությամբ։ Մերօրյա հայաստանյան շուկան նույնպես պահանջում է լեզվական բարձր գիտելիքներ ունեցող մասնագետներ։ Ժամանակի հրամայականն է դարձել լեզուների իմացության մակարդակի բարձրացումն ինչպես ակադեմիական, այնպես էլ մասնագիտական կրթության որակի ապահովման գործում։

Այս համատեքստում, առաջադրված նպատակների փուլային ու համակարգված իրագործման համար առաջնահերթ է դառնում՝

- Օտար լեզուների շերտավորված ուսուցման ծրագրերի կազմում, համատեղ քննարկում, հաստատում, ծրագրերին համապատասխան ուսումնական նյութերի հայթայթում, հավաքագրում, մշակում և գործադրում ուսուցման ընթացքում:
- Լեզուների առցանց հեռավար ուսուցման ծրագրերի կազմում, մշակում և գործադրում:
- Լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերի մշակում, նյութերի ժողովում և մատուցում:
- Տեսալսողական սարքերի գործադրում ուսումնական դասընթացներին:

Ծրագրի նախագծում

Սույն հոդվածի նպատակն է «Անգլերենը պետծառայողների համար» ծրագրի նախագծումը, որի

նպատակն է բարձրացնել պետաշխատողների օտար լեզվի իմացության մակարդակը:

Պետական ծառայողների համար անգլերենի ուսուցման ծրագրի բովանդակությունը պետք է հիմնված լինի ESP (անգլերեն հատուկ նպատակների համար) մեթոդաբանության վրա՝ կենտրոնանալով պետական կառավարման, դիվանագիտության և պաշտոնական հաղորդակցության վրա:

1. Նախաբան

- Նպատակը: Միջազգային գործընկերների հետ հաղորդակցվելու, գիտաժողովների մասնակցելու և օտարալեզու փաստաթղթերի հետ աշխատելու հմտությունների զարգացում:
- Թիրախային խումբ: Նախարարությունների, գերատեսչությունների և համայնքապետարանների աշխատակիցներ (նշել անգլերենի մակարդակը, օրինակ՝ A2-B2):
- Տևողությունը: Դասընթացի ընդհանուր ժամաքանակը (օրինակ՝ 72 կամ 144 ակադեմիական ժամ):

2. Ծրագրի թեմատիկ բովանդակությունը

Կառուցեք նյութը՝ ըստ պետական ծառայողներին վերաբերող հիմնական մոդուլների՝

Մոդուլ 1: Պետական կառավարման հիմունքներ (Public Administration)

- Կառավարության կառուցվածքը և հանրային ծառայությունը:
- Քաղաքականության (Politics) և վարչարարության (Administration) տարբերությունները:
- Քաղաքացիների հետ փոխգործակցություն (դիմումների ընդունում, ծառայությունների մատուցում):

Մոդուլ 2: Միջազգային հանդիպումներ և պաշտոնական նամակագրություն

- Գործնական նամակագրություն (պաշտոնական նամակներ, հուշագրեր, էլեկտրոնային նամակներ):
- Հեռախոսային էթիկետ և տեսակոնֆերանսների վարում:

- Մասնակցություն բանակցություններին (դիրքորոշման արտահայտում, քաղաքավարի անհամաձայնություն):

Մոդուլ 3: Հանրային խոսք և ելույթներ (Public Speaking)

- Պետական նախագծերի, բարեփոխումների և նախաձեռնությունների ներկայացում:
- Թվերի, գրաֆիկների և վիճակագրության լեզուն անգլերենում:
- Հարց ու պատասխանի վարում:

Մոդուլ 4: Միջազգային համագործակցություն և դիվանագիտություն

- Օտարերկրյա պատվիրակությունների ընդունում և ուղեկցում:
- Միջմշակութային հաղորդակցություն և գործարար էթիկետ:
- Գլոբալ խնդիրների քննարկում (էկոլոգիա, տնտեսություն, կայուն զարգացում):

3. Ձևավորվող կոմպետենցիաները

Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.

- Կազմել պաշտոնական հաշվետվություններ և ամփոփագրեր (Policy briefings):
- Կարդալ և հասկանալ միջազգային իրավական ակտերն ու վերլուծությունները:
- Վարել փաստարկված քննարկումներ:

4. Ուսուցման մեթոդները

- Դերային խաղեր (Role-plays): Գագաթնաժողովների, ընդունելությունների և պաշտոնական հանդիպումների սիմուլյացիա:
- Քեյս-մեթոդ (Case study): Միջազգային պրակտիկայից իրական իրավիճակների վերլուծություն:
- Նախագծային աշխատանք: Անգլերենով սեփական ոլորտի վերաբերյալ ելույթի պատրաստում:

5. Արդյունավետության գնահատում

- Ընթացիկ ստուգումներ (բառապաշարի և քերականության թեստեր):

- Ամփոփիչ քննություն (նախագծի պաշտպանություն, դերային խաղ կամ բանավոր հարցազրույց):

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա. Այսպիսով սույն ծրագրի նպատակն է.

ա) Լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդների և ռազմավարության ու մարտավարության կիրառում ժամանակակից միջազգային շուկային հարիր դասավանդման և թեստավորման գործընթացի արդիական տեխնոլոգիաների գործադրմամբ:

բ) Լեզուների դասընթացների կազմակերպում լեզվի համաեվրոպական իմացության (CEFR) բոլոր մակարդակներով (A1-C2):

գ) Ժամանակակից շուկայում տարբեր ոլորտների օտար լեզուների ակադեմիական իմացությամբ մասնագետներով ապահովում (օտար լեզուն դիվանագետների, քաղաքագետների, իրավագետների և այլոց համար):

դ) Հայաստանի Հանրապետության պետական համակարգի քաղաքացիների՝ լեզուների շերտավորված

ուսուցում՝ ըստ պատրաստվածության աստիճանի (ՀՀ Կառավարության հաստատած և միջազգային վկայագրերի տրամադրմամբ).

ե) Լեզուների արագ յուրացման դասընթացների արդյունավետ կազմակերպում՝ ըստ ընդհանուր խոսակցական, գործարարության, զբոսաշրջության և այլ ոլորտների:

զ) Լեզուների առցանց հեռավար ուսուցում, թեստավորում և վկայագրերի տրամադրում:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ պետական ծառայողների համար ESP մեթոդաբանության վրա հիմնված անգլերենի ուսուցման ծրագրի ներդրումը սոսկ լեզվական դասընթաց չէ, այլ ՀՀ հանրային համակարգի արդիականացմանն ուղղված ռազմավարական քայլ: Ուսուցման ինտերակտիվ մեթոդների և բազմակողմանի գնահատման համակարգի կիրառումը երաշխավորում է, որ մասնակիցները ոչ միայն կհաղթահարեն լեզվական պատնեշը, այլև ձեռք կբերեն գործնական կոմպետենցիաներ՝ միջազգային հարթակներում

Հայաստանի Հանրապետության շահերն ու գիտական միտքը լավագույնս ներկայացնելու համար:

Գրականություն

1. Adeeb, S., & Herat University (Comps.). (2018). English for public administration students (English for specific purposes): Textbook. US Embassy Project. (125 p.)
2. Apresyan, M., & Bagiryan, D. (2015). A new glimpse into science. YSU Press. (186 p.)
3. Apresyan, M., Asikyan, S., Ayvazyan, A., Mnatsakanyan, L., Mkrtchyan, K., & Voskanyan, A. (2023). English for law. YSU Press. (283 p.)
4. Basturkmen, H. (2010). Developing courses in English for specific purposes. Palgrave Macmillan. (160 p.)
5. Cotton, D., Falvey, D., & Kent, S. (2000). Market leader: Upper intermediate course book. Longman. (176 p.)
6. Dudley-Evans, T., & St John, M. J. (1998). Developments in English for specific purposes: A multi-disciplinary approach. Cambridge University Press. (317 p.)

7. Gregory, A. (2001). Public relations in practice. Kogan Page. (162 p.)
8. Harding, K. (2007). English for specific purposes (Resource books for teachers). Oxford University Press. (176 p.)
9. Hutchinson, T., & Waters, A. (1987). English for specific purposes. Cambridge University Press. (183 p.)
10. Ivanova, L. (Ed.). (2021). Instruments for professional communication in public administration (English for specific purposes). Prospekt. (144 p.)
11. Rogers, J. (2001). Market leader: Upper intermediate practice file. Longman. (112 p.)
12. Поляков, О. Г. (2003). Английский язык для специальных целей: теория и практика. НВИ-ТЕЗАУРУС. (188 с.)